Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Յունիբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
30.04.2005թ. N 16
Երևան

Մասնակցում էին
Ընկերության թվով 100 % ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի լիազոր ներկայացուցիչները.

Բանկի բաժնետերեր՝
1. Ժողովի նախագահ – «Յունիինվեստ» ՍՊԸ-ի և «DEBBAN INVESTMENTS LIMITED» ընկերությունների լիազորված անձ Գագիկ Զաքարյան - 49%
2. Ժողովի քարտուղար - «Էվաինվեստ» ՍՊԸ-ի լիազորված անձ Գ.Պիսկով – 51%

Հրավիրվածներ՝
1. Խորհրդի անդամ - Գ.Սրապյանը
2. Վարչության նախագահ – Վ.Աթայանը
3. Վարչության նախագահի առաջին տեղակալ – Վ.Եղիազարյանը
4. Գլխավոր հաշվապահ - Գ.Գրիգորյանը
5. Վարչության նախագահի առաջին տեղակալ – մասնաճյուղային ցանցի կառավարման դեպարտամենտի տնօրեն – Ս.Արզումանյանը
6. Վարկավորման դեպարտամենտի տնօրեն - Ա.Ավագյանը
7. Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն – Վ.Աղաջանյանը
8. Իրավաբանական դեպարտամենտի տնօրեն – Օ.Առաքելյանը
9. Պլաստիկ քարտերի դեպարտամենտի տնօրեն – Մ.Հակոբյանը
10. Գլխավոր հաշվապահի տեղակալ - Ա.Մալխասյանը
11. Գովազդի բաժնի պետ -Ա.Գրիգորյանը
12. Ներքին աուդիտի դեպարտամենտի տնօրեն - Գ.Դրամբյանը
13. Ֆինանսավերլուծական դեպարտամենտի տնօրեն – Ս.Գրիգորյանը
14. ՀՀ կենտրոնական բանկից՝ Տ.Սարգսյանը, Ա.Ջավադյանը, Հ.Սուվարյանը
15. Ռուսաստանի բանկերի միության նախագահ - Գ.Թոսունյանը
16. ՀՀ բանկերի միության գործադիր տնօրեն – Վ.Բաղալյանը
17. «KPMG Հայաստան» ՓԲԸ ներկայացուցիչներ

ՕՐԱԿԱՐԳ
1. *Բանկի գործունեության վերաբերյալ Վարչության նախագահի հաշվետվության մասին.- զեկուցող Վ.Աթայան*
2. *Բանկի ֆինանսական գործունեության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի հաշվետվության մասին - զեկուցող Օ.Առաքելյան*
3. *Բանկի 2004թ. ֆինանսական և հարկային հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների և մասնաճյուղերի աշխատանքների տարեկան արդյունքների հաստատման մասին - Գ.Գրիգորյան*
4. *Շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման, տարեկան շահութաբաժինների չափի շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման, տարեկան շահութաբաժինների հաստատման և գլխավոր պահուստին հատկացում կատարելու մասին -զեկուցող Գ.Զաքարյան*
5. *Բանկի աուդիտն անցկացնող անձի հաստատման մասին - զեկուցող Վ.Եղիազարյան*
6. *Բանկի 2005-2007թթ ռազմավարական ծրագրի մասին - զեկուցող Վ.Եղիազարյան*
7. *Բանկի 2005թ. միջոցառումների ծրագրի մասին - զեկուցող Վ.Եղիազարյան*
8. *Վերստուգող հանձնաժողովի կազմի հաստատման մասին – Օ.Առաքելյան*
9. *Խորհրդի կազմի հաստատման մասին - զեկուցող Գ.Զաքարյան*

ԼՍԵՑԻՆ
Վ.Աթայանին – 1-ին հարցի վերաբերյալ – ներկայացրեց Բանկի ընդհանուր զարգացման տենդենցները նախորդ տարվա ընթացքում, Բանկի ձեռքբերումները և հեռանկարային զարգացման միտումները առաջիկա տարիների ընթացքում:

ԼՍԵՑԻՆ
2-րդ՝- Հաշվի առնելով, Վերստուգող հանձնաժողովի նախագահ Ռ.Գալստյանի հանրապետությունից բացակայելու հանգամանքը, Բանկի ֆինանսական գործունեության վերաբերյալ Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը ամփոփ ներկայացրեց Օ.Առաքելյանը:

ԼՍԵՑԻՆ
Գոհար Գրիգորյանին – 3-րդ հարցի վերաբերյալ, ներկայացրեց, որ ըստ Վերստուգող հանձնաժողովի կողմից ներկայացված, ինչպես նաև Խորհրդի նախնական հաստատմանն արժանացած Բանկի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմված եզրակացության, Բանկի

1. ակտիվները կազմել են 13091090 հազ. ՀՀ դրամ
2. պարտավորությունները՝ 10100202 հազ. ՀՀ դրամ
3. կապիտալը՝ 2.990.888 հազ. դրամ
4. տոկոսային եկամուտները կազմել են ընդամենը՝ 1336855 հազ. ՀՀ դրամ
5. տոկոսային ծախսերը կազմել են ընդամենը՝ 598814 հազ. ՀՀ դրամ
6. զուտ տոկոսային եկամուտները կազմել են 738041 հազ. ՀՀ դրամ
7. ոչ տոկոսային եկամուտները կազմել են ընդամենը 396912 հազ. ՀՀ դրամ
8. ոչ տոկոսային ծախսերը կազմել են ընդամենը 641815 հազ. ՀՀ դրամ
9. զուտ ոչ տոկոսային ծախսերը կազմել են 244903 հազ. ՀՀ դրամ
10. զուտ մասհանումները ընդամենը 443436 հազ. ՀՀ դրամ
11. շահույթը մինչև հարկվելը կազմել է 49702 հազ. ՀՀ դրամ
12. հետաձգված հարկային ակտիվները 6388 հազ. ՀՀ դրամ
13. զուտ շահույթը կազմել է 15408 հազ. ՀՀ դրամ գումար:

Բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ պարզվել է, որ 01.01.2004 թ-ից մինչև 31.12.2004թ.

1. զուտ դրամական հոսքերը՝ մինչև գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունը, կազմել է 1174405 հազ. ՀՀ դրամ
2. դրամական զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունից՝ 2291724 հազ. դրամ
3. դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ 1284797 հազ. ՀՀ դրամ
4. դրամական միջոցների հոսքերի զուտ աճը կազմել է՝ 2500706 հազ. ՀՀ դրամ գումար:

Վերոհիշյալը հիմք ընդունելով՝ առաջարկեց հաստատել տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը:

Քվեարկեցին.
կողմ - 100 ձայն
դեմ - 0
ձեռնպահ - 0

ԼՍԵՑԻՆ
Գ.Զաքարյանին 4-րդ հարցի կապակցությամբ:
Առաջարկեց Բանկի ստացված ողջ շահույթը չբաշխել և թողնել Բանկի հեռանկարային զարգացմանը, իսկ հաշվի առնելով Բանկի կանոնադրության դրույթները՝ գլխավոր պահուստին հատկացնել զուտ շահույթի 5%:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ
Վ.Աթայանին 5-րդ, 6-րդ և 7-րդ հարցերի կապակցությամբ:

Ներկայացրեց Բանկի 2005-2007թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը և առաջարկեց հաստատել այն: Հաջորդ հարցի կապակցությամբ առաջարկեց Բանկի աուդիտն անցկացնելու համար հայտարարել մրցույթ ՀՀ-ում միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական կազմակերպությունների միջև, որից հետո հաղթող կազմակերպության հետ կնքել պայմանագիր:

Այնուհետև ներկայացրեց Բանկի երկրորդ կիսամյակի միջոցառումների ծրագիրը և առաջարկեց հաստատել այն:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ
Օ.Առաքելյանին 8-րդ հարցի վերաբերյալ՝ Վերստուգող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին - ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, Բանկի կանոնադրության դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերստուգող հանձնաժողովի անդամ Միքայել Պողոսյանը բազմից դիմել է Բանկի Վերստուգող հանձնաժողովի կազմից դուրս գալու խնդրանքով, առաջարկեց հանել Միքայել Պողոսյանին Բանկի Վերստուգող հանձնաժողովի կազմից և նրա փոխարեն Վերստուգող հանձնաժողովի կազմում ընդգրկել Ալեքսան Սահակյանին: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում գործող մյուս Բանկերը Վերստուգող հանձնաժողովի անդամներին հատկացնում են նվազագույն աշխատավարձից ոչ պակաս ամսեկան աշխատավարձ և մեր Վերստուգող հանձնաժողովի անդամները դիմել են Բանկ իրենց ևս աշխատավարձ հատկացնելու խնդրանքով, առաջարկեց նրանց հատկացնել որոշակի գումար ամսեկան աշխատավարձ:

Քվեարկեցին.
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ
Գ.Զաքարյանին 9-րդ հարցի վերաբերյալ
Խորհրդի կազմը հաստատելու մասին՝ առաջարկեց Բանկի Խորհրդի կազմից հանել Գագիկ Աբրահամյանին և խորհրդի կազմում ընդգրկել նոր անդամ Սուրեն Հայրիյանին: Այսպիսով Խորհրդի կազմը սահմանել հինգ անձ՝ Գ.Զաքարյան, Գ.Պիսկով, Ֆ.Սարգսյան, Գ.Սրապյան և Ս.Հայրիյան:

Ժողովի վերջում ելույթ ունեցան Բանկի բաժնետերերի ներկայացուցիչներ Գ.Զաքարյանը և Գ.Պիսկովը, նշեցին Բանկում առկա որոշ թերություններ, մասնավորապես՝ կապված նոր վարկառուների ներգրավման և քարտերի տրամադրման պասիվ զարգացման հետ: Տրվեցին հետևյալ հանձնարարականները՝

1. ստեղծել սեփական հավատարմագրային(պրոցեսինգային) կենտրոն, որը կբերի քարտերով մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնման և ծախսերի նվազման:
2. Ձևավորել նոր վարկային-քարտային գործիքների ստեղծման և ներդրման գործընթաց, ներգրավել նոր քարտապան հաճախորդների:
3. Բանկում արդեն իսկ գործող «Բանկ-Հաճախորդ» համակարգն անվճար առաջարկել բոլոր հաճախորդներին:
4. Ապահովել մինչև 2005թ. բացված Բանկի մասնաճյուղերի շահութաբեր աշխատանքը:
5. Անշեղորեն կատարել 2005թ. միջոցառումների ծրագրով սահմանված հանձնարարականները:
6. Կազմակերպել Բանկի աշխատակիցների գործուղումներ «Յունիաստրում բանկ»-ի ուսունական կենտրոն՝ փորձի փոխանակման և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով:

Քվեարկության և ելույթների արդյունքների հիման վրա Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել 2004թ. Բանկի և մասնաճյուղերի տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը:
2. Ֆինանսական տարվա ընթացքում ստացված 15408 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթը չբաշխել, իսկ գլխավոր պահուստին հատկացնել զուտ շահույթի 5%:
3. Բանկի աուդիտն իրականացնելու համար հայտարարել մրցույթ ՀՀ-ում միջազգային ճանաչում ունեցող անկախ աուդիտորական կազմակերպությունների միջև, և հաղթող կազմակերպության հետ կնքել պայմանագիր:
4. Հաստատել Բանկի 2005-2007թթ ռազմավարական ծրագիրը:
5. Հաստատել Բանկի 2005թ. միջոցառումների ծրագիրը:
6. Բանկի Վերստուգող հանձնաժողովի կազմից հանել Միքայել Պողոսյանին և նրա փոխարեն ընտրել Ալեքսան Սահակյանին: Վերստուգող հանձնաժողովի կազմը սահմանել երեք անձ՝ Ռ.Գալստյան, Վ.Մկրտչյան և Ալեքսան Սահակյան: Նրանցից յուրաքանչյուրին սահմանել ամսեկան աշխատավարձ 15000/տասնհինգ հազար/ ՀՀ դրամի չափով:
7. Բանկի Խորհրդի կազմից հանել Գագիկ Աբրահամյանին և խորհրդի կազմում ընդգրկել նոր անդամ Սուրեն Հայրիյանին: Այսպիսով Խորհրդի կազմը սահմանել հինգ անձ՝ Գ.Զաքարյան, Գ.Պիսկով, Ֆ.Սարգսյան, Գ.Սրապյան և Ս. Հայրիյան:
8. Ժողովի ընթացքում տրված հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Բանկի Վարչության նախագահին:

Նախագահ — Գ. Տ. Զաքարյան

Քարտուղար — Գ.Պիսկով